ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված շահերի բախման առկայության վերաբերյալ

ք. Ստեփանավան 11.03.2025թվական

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կողմից 27.02. 2025 թվականին հայտարարվել է մեկ անձից գնման ընթացակարգով «ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԾՁԲ-25/16» ծածկագրով մրցույթը՝ պատճենահանող և տպող սարքերի լիցքավորման ծառայության ձեռք բերման նպատակով: Հայտերի ներկայացման ժամկետ սահմանվել է 28.02.2025 թվականը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը:

Ստեփանավան համայնքում պատճենահանող և տպող սարքերի լիցքավորման ծառայություն մատուցվում է երեք անհատ ձեռնարկատերերի կողմից, ուստի մրցույթի հրավերն ուղարկվել է վերոնշյալ երեք անհատ ձեռնարկատերերին:

Գնման ընթացակարգին սահմանված կարգով և ժամկետում մասնակցության հայտ է ներկայացրել միայն «Ա/Ձ Կարինե Բախշինյան»-ը, ում հայտը բավարարում է մրցույթի պահանջներին: Վերջինս հանդիսանում է Ստեփանավան համայնքի ավագանու անդամ Արթուր Պապյանի կինը:

Ուստի՝ ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջներով և հաշվի առնելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 07.03.2025 թվականի թիվ

01/955-2025 գրությունը, որպես պատվիրատուի ղեկավար հայտնում եմ, որ առկա է փոխկապակցվածություն «Ա/Ձ Կարինե Բախշինյան» մասնակցի հետ և հանդես եմ գալիս շահերի բախման իրավիճակի առկայության վերաբերյալ հրապարակային հայտարարությամբ:

Հայտարարության հրապարակումից հետո, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի և «Ա/Ձ Կարինե Բախշինյան» մասնակցի միջև սահմանված կարգով կկնքվի համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**